

**Գուրգեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Քրիստինե ՍՈՂԻԿՅԱՆ**

*Երևանի Վ. Բոյունովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան*

**ՕՐՈՒԵԼՅԱՆ «ԵՐԿՄԻՏՔԸ» ԵՎ «ՆՈՐԽՈՍՔԸ» ՈՐՊԵՍ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ**

Հոդվածում ներկայացվում է Ջ. Օրուելի «1984» վեպում տեղ գտած Երկմիտքի և Նորխոսքի՝ որպես քաղաքական մտաշահարկման հզոր խոսույթային և լեզվական գործիքների լեզվաբանական վերլուծությունը: Աշխատանքը նախ դիտարկում է լեզուն՝ որպես քաղաքական մտաշահարկման ամենահզոր և ամենաարդյունավետ միջոց: Այնուհետև ուսումնասիրվում է Երկմիտքը՝ որպես լեզվական մտաշահարկման տարատեսակ՝ ներկայացված ճանաչողական աններդաշնակության հետ հակադրության միջոցով: Այս հիմքի վրա այնուհետև պարզաբանվում են դրա ամենատարբեր հոգեբանական, մտային և հասարակական-քաղաքական առանձնահատկությունները: Հոդվածում այնուհետև վերլուծվում է Նորխոսքը՝ որպես քաղաքական մտաշահարկման առավել արդյունավետ մտածանաչողական գործիք:

Բանալի բառեր. *Օրուել, 1984, Երկմիտք, Նորխոսք, քաղաքական մտաշահարկում, լեզվական մտաշահարկում, քաղաքական խոսույթ, քաղաքական հեգնանք*

Ջ. Օրուելի «1984» վեպի բովանդակային առանցքը ամբողջատիրական կառավարությունների կողմից բնակչության քաղաքական մտաշահարկումն է: Վեպը, լինելով համաշխարհային գրականության նշանավոր ստեղծագործություն, հեղինակի՝ բռնատիրական հասարակարգերի վարած մտաշահարկային քաղաքականության դեմ տարած գաղափարական և ստեղծագործական պայքարի վերջին ամենահզոր հարվածն է: Վեպում հեղինակը բավականին պատկերավոր կերպով առաջադրում է քաղաքական մտաշահարկման գործընթացի ներակա գործոնները՝ բռնի ուժի գործադրումից մինչև խեղաթյուրված լրատվություն և մարդկային կյանքերի անխափան ու ամենահաս վերահսկողություն: Սակայն շատ ավելի նշանակալի են քաղաքական մտաշահարկման լեզվական արտահայտման յուրահատկությունները, որոնց վեպում հեղինակը արժանացրել է մանրակրկիտ լեզվագործաբանական մեկնաբանության /Orwell, 2012: 343-355/:

Օրուելը լեզուն դիտում է որպես քաղաքական մտաշահարկման ամենահզոր գործիք և «ի ցույց է դնում, որ լեզուն կարող է գործածվել քաղաքական նպատակներով՝ մարդկանց մոլորեցնելու և մտաշահար-

կելու համար ձևավորելով այնպիսի մի հասարակություն, որում մարդիկ աներկբայորեն կհնազանդվեն իրենց իշխանությանը և անգիտակցաբար կընդունեն որջ քաղաքական քարոզչությունը որպես փաստացի իրականություն» /Berkes, 2000/: Օրուելն, ըստ էության, մտաշահարկումը ներկայացնում է «լեզու-միտք-իրականություն» եռամիասնության միջոցով՝ գտնելով, որ մարդն իրականությունն ընկալում, ճանաչում և ըմբռնում է լեզվի միջոցով, և որ լեզվի միջոցով կարելի է խեղաթյուրել ճշմարտությունն ու կատարելապես շահարկել մարդու միտքը, այսինքն՝ լեզվականորեն միջամտել մարդու աշխարհընկալման և իրականության ճանաչման բնականոն գործընթացին մտացածին, ոչ իրական և թյուր մեկնաբանված իրողությունների կանխամտածված և շահադիտական հրամցման միջոցով: «Քաղաքականությունն ու անգլերենը» հոդվածում խոսելով քաղաքական և հասարակական նպատակներով լեզվի միտումնավոր կերպով աղճատված, անհստակ, այլակերպված կիրառության մասին՝ գրողը նշում է, որ «եթե միտքն աղավաղում է լեզուն, լեզուն էլ կարող է միտքն աղավաղել» /Orwell, 1946/: Հենց այս առանցքային փոխազդեցության վրա է հիմնվում Ջ. Օրուելը քաղաքական մտաշահարկման իր ուսումնասիրության ժամանակ:

Լեզվի այսպիսի մեկնաբանությամբ Օրուելն, ըստ էության, հարում է լեզվաբանական հարաբերականության տեսության այն հիմնական գաղափարին, համաձայն որի լեզուն և նրա կառույցները սահմանում են մարդկային մտածողությունը՝ այդպիսով ունենալով նաև մտքի սահմանափակման, այսինքն՝ աշխարհաճանաչման և քննադատական ու վերացարկված մտածողության սահմանափակման ներուժ:

Լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու և սահմանելու հնարավոր կարողության մասին խոսվել է դեռ 20-րդ դարի 30-ական թվականներից: Էդուարդ Սեպիրի և Բենջամին Լիի Ուորֆի կողմից առաջադրված տեսությունը, որը նաև անվանում են Սեպիր-Ուորֆի հիպոթեզ /Whorf, 1956/, առաջարկում է այն դրույթը, որ լեզվի ներակա կառույցները անմիջականորեն սահմանում և կանխորոշում են մարդկային մտածողությունն ու աշխարհայացքը: Հետևաբար, որքան հագեցած է լեզուն բարդ քերականական կառույցներով (որոնք իրենց հերթին արտացոլում են տարբեր վերացական կարգեր), եղանակավորում և վերաբերմունք արտահայտող միջոցներով (վերաբերականներ, մակբայներ, ինչպես և ոչ նյութական և զգացմունք-հույզ արտահայտող բառային միավորներ), այնքան բազմակողմանի և բազմաշերտ է լեզվակրի կողմից աշխարհի և իրողությունների ճանաչումը և դրանց տրվող գնահատականը՝ պայմանավորված այդ երևույթների և հասկացությունների անվանման համար լեզվում առկա ատաղձով և նյութով: Վերջիններիս բացակայությունը կամ աղավաղումը, հետևաբար, հանգեցնում է իրականության թյուր կամ թերի ընկալման և աղճատված աշխարհայացքի ձևավորման: Ի դեպ, ըստ լեզվաբանական հարաբերա-

կանության տեսության, լեզուն կարող է ազդել մարդկային մտքի և ճանաչողության 3 տարբեր ոլորտների վրա՝

- մարդու ընկալումների ու ճանաչողության վրա, ինչպիսիք են *գույնի, ժամանակի, տարածության, չափի* և այլ երևույթների ընկալումը,
- անհատի ճանաչողության կառուցվածքի և նրա մոտ ձևավորված աշխարհայացքի վրա,
- բուն տրամաբանության կառուցվածքի և տրամաբանական համարվող ցանկացած երևույթի ընկալման վրա /Rogers & Steinfatt, 1999/:

Եվ իրոք՝ լեզուն մարդկային ըմբռնողականության և աշխարհընկալման այնպիսի միջոց է, որն ի զորու է կողավորելու, պարունակելու և հաղորդելու թե՛ օբյեկտիվ իրականությունն ու բացարձակ ճշմարտությունը, թե՛ շահադիտական և մտաշահարկային նպատակներով ձևակերպված կեղծիքը: Քանի որ լեզուն մարդկային հաղորդակցության, ինչպես նաև տեղեկատվության պահպանման և փոխանցման թերևս ամենահզոր համակարգն է, դրա միջոցով կարելի է այլափոխել ոչ միայն ներկա իրականությունը, այլ նաև խմբագրել անցյալը, ձևափոխել պատմությունը և «նորաստեղծ իրականությունը» հաղորդել մարդուն իբրև իրողություն: Եվ քանի որ լեզուն համարվում է մարդկային մտածողության բնատուր և ամենախորը կառույցը, մարդը մտածում և որպես իրողություն է ընդունում այն, ինչ իրեն հաղորդվում և փոխանցվում է լեզվի միջոցով: Նման լեզվական ներագդման արդյունքում էլ ձևավորվում է որոշակիորեն քարտեզագրված աշխարհայացք և մտածելակերպ, որն էլ կանխորոշում է մարդու սոցիալական վարքագիծն ու գործունեությունը (St' u Sapir and Whorf, Chomsky, Chilton, Foucault և այլք):

Ջ. Օրուելի «1984» վեպում քաղաքական մտաշահարկման ռազմավարությունների նկարագրման հիմքում ընկած է ճշգրիտ և հիմնավորված լեզվական կառույցը: Այս յուրահատկության շնորհիվ էլ վեպը խոսույթի քննադատական վերլուծության տեսանկյունից մշտապես ունեցել է խոշոր գիտական և տեսական արժեք: Վեպում իրականության խիստ հոռետեսական արտապատկերումը (նախարարությունների մեծությունը, ավերված շենքերը, կեղտոտ փողոցները), մշտական պատերազմական վիճակը, հասարակության նկատելի շերտավորումը՝ արտահայտված վեպի կերպարների վարքագծային և խոսքային վարվեցողությամբ (ներքին կուսակցության, արտաքին կուսակցություն, պրոլիներ (աշխատավոր դասակարգ)), առօրյա կյանքի վերահսկողությունն ու բռնի ուժի կիրառումը մտքի ոստիկանության կողմից, ինչպես նաև կուսակցության տարածած գաղափարախոսությունը հենց այն համատեքստն է, որում առկայանում և իրենց մտային ներագդման գործառույթն են իրականացնում մտաշահարկային լեզվական կառույցները: Լեզվական արտահայտման յուրահատկությունների հետ միասին մտաշահարկումը վեպում

ներկայացնում է փոխներագրող և փոխայմանավորող երկու երևույթների՝ Երկմտքի (Doublethink) և Նորխոսքի (Newspeak)¹ միջոցով:

Երկմիտքը, ըստ էության, մտաշահարկային խոսույթի արդյունքում ձևավորված մտավոր կարողություն կամ վիճակ է՝ միաժամանակ հավատալու երկու հակադիր գաղափարների: Ահա թե ինչպես է հեղինակը սահմանում Երկմիտքը վեպում. «Երկմիտքը մտքում միաժամանակ երկու հակադիր համոզմունք ունենալու և դրանց միաժամանակ հավատալու կարողությունն է <...> Դիտավորյալ սպեր ասել՝ դրանց անկեղծորեն հավատալով, մոռանալ ցանկացած փաստ, որն այլևս ձեռնարկու չէ, և հետո, երբ դրա կարիքը նորից զգացվի, մոռացության գրկից ետ քաշել այն՝ որքան ժամանակով որ անհրաժեշտ է, ժխտել օբյեկտիվ իրականության գոյությունը՝ շարունակաբար հաշվի նստելով դրա հետ: Այս բոլորը անժխտելիորեն պարտադիր են: Անգամ Երկմիտք բառը գործածելու համար անհրաժեշտ էր երկմտքի կիրառություն, քանի որ այս բառը գործածելով՝ մարդն ընդունում է, որ խաղ է անում իրականության հետ. երկմտքի մի նոր ակտով մարդը ջնջում է այս գիտելիքը, և այսպես շարունակ՝ սուտը ճշմարտությունից միշտ մեկ քայլ առաջ գցելով»² (Orwell, 2012: 244):

«Իմանալ և չիմանալ, գիտակցել ողջ ճշմարտացիությունը, բայց և ասել զգուշորեն մտածված սպեր, միաժամանակ ունենալ երկու իրարամերժ կարծիք՝ գիտակցելով, որ դրանք բացառում են միմյանց, բայց հավատալ երկուսին էլ, կիրառել տրամաբանությունն ընդդեմ տրամաբանության, ժխտել բարոյականությունը՝ միաժամանակ ընդունելով այն, հավատալ, որ ժողովրդավարություն չի կարող լինել և որ հենց Կուսակցությունը ժողովրդավարության հովանավորն է, մոռանալ՝ ինչ պարտավոր ես մոռանալ, հետո, անհրաժեշտ պահին վերականգնել այն հիշողությանդ մեջ, և հետո նորից արագ մոռանալ, և որ ամենակարևորն է՝ նույն գործընթացը կիրառել հենց բուն գործընթացում. սա էր ամենակարևոր նրբությունը՝ գիտակցաբար անգիտակցություն առաջացնել, և հետո, կրկին, չճանաչել հիպնոսի այն քայլը, որ հենց նոր կատարեցիր: Անգամ «Երկմիտք» բառը հասկանալը պահանջում էր երկմտքի կիրառում» (Orwell, 2012: 40-41):

Երկմտքի մտային ներագրման մեխանիզմը բավականին բարդ և բազմաչափումային երևույթ է. կեղծված, մտացածին, իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությունը, խոսույթային հստակ պայմաններում լեզվական տարբեր կառույցների միջոցով փոխանցվելով մարդուն, վերջինիս գիտակցության մեջ առաջացնում է հակադրություն հիշողության մեջ արդեն իսկ ամրագրված տեղեկույթի հետ: Այնուհետև, իշխանական ուժի ազդեցության տակ, շարունակական քարոզչության միջոցով վավերացվելով՝ Երկմիտքն աստիճանազրկում է արդեն իսկ գոյություն ունեցող տեղեկույթը և սկսում է վերջինիս հետ զբաղեցնել հավասար դիրք՝ աստիճանաբար ներագրելով այնպիսի խորքային մա-

կարդակների վրա, ինչպիսիք են մարդու համոզմունքներն ու արժեհամակարգը: Արդյունքում մարդու մոտ տեղի է ունենում արժեքների փոխզիջում (compromization of values), նոր ստացված արժեքը հիմք է դառնում նոր համոզմունքի համար, որի հիման վրա էլ ձևավորվում է հասարակական վարքը և քայլերը կանխորոշող այլափոխված մտածելակերպը:

Երկմիտքը՝ որպես մտածական և ճանաչողական վիճակ, համեմատվել է ճանաչողական աններդաշնակության (cognitive dissonance) հետ, քանի որ վերջինս նույնպես կապված է երկու հակադիր գաղափարների փոխգործակցության հետ: Ճանաչողական աններդաշնակությունը երկու հակադիր գաղափարների ազդեցությամբ ձևավորված ճանաչողական անհամապատասխանությունն է, որի արդյունքում մարդն ունենում է մտավոր լարվածություն և անհարմարության զգացողություն: Երաժշտության համանմանությամբ, միաժամանակ հնչող երկու հնչյունները (ինտերվալ կամ միջակայք), լսողի կողմից կարող են ընկալվել որպես *համահունչ* և *տարահունչ*: Համահնչության (consonance) դեպքում այս միաժամանակյա հնչողությունը դուրեկան է և ընդունելի: Տարահնչության (dissonance) դեպքում միջակայքը լսողի մոտ առաջացնում է լարվածություն և սպասում՝ լսելու տարահունչ հնչյունների լուծումը համահունչ ինտերվալի մեջ: Երկմտքի դեպքում, ի հակադրումն ճանաչողական աններդաշնակության, գաղափարների հակադրության արդյունքում առաջացող լարվածություն կամ որևէ այլ ֆիզիկական-հոգեբանական հակազդեցություն չի ենթադրվում. գաղափարները համահունչ են, համագոյակցում են և հավասարապես ընդունվում և ըմբռնվում են մարդու կողմից:

Վեպում Երկմիտքը ներկայացվում է նաև որպես անցյալի ու պատմության կեղծման և մարդկային հիշողության այլափոխման հիմնական միջոց: *«Եվ ինչպե՞ս կարող ես հաստատել ամենասակներև փաստը, եթե սեփական հիշողությունիցդ դուրս դրա մասին որևէ հիշատակում գոյություն չունի:»* (Orwell, 2012: 41): Օվկիանիայում քաղաքական ռեժիմը վերացրել էր տեքստի՝ որպես տեղեկույթի և հատկապես՝ անցյալի, ժամանակագրության, փաստերի արձանագրման, պահպանման և փոխանցման գործառույթը: Ավելին, լեզուն նույնպես ամլացված էր այդ նույն գործառույթից: Հետևաբար, այլևս անհնար էր վավերացնել անցյալը և դրա հետ կապված մարդկային հիշողությունը: Անցյալի հիշողության և ներկայացվող այլափոխված իրականության հակադրության արդյունքում նկատվող ճանաչողական աններդաշնակությունը բավականին լավ է պատկերված հենց գլխավոր հերոսի մտավոր-հոգեբանական ապրումների միջոցով. *«Կուսակցությունն ասում էր, որ Օվկիանիան երբեք էլ Եվրասիայի հեյր դաշինքի մեջ չի եղել: Բայց ինքը՝ Ուինսթոն Սմիթը, գիտեր, որ Օվկիանիան ընդամենը չորս տարի առաջ Եվրասիայի դաշնակիցն էր: Բայց որպե՞ղ էր այդ գիտելիքը: Միայն իր սեփական գիտակցության մեջ, որն ամեն դեպքում վաղ թե ուշ պետք է*

ոչնչացվեր (Orwell, 2012: 40): «Ուինսթոնը չէր կարողանում հստակ մտաբերել մի ժամանակահատված, երբ երկիրը պատերազմի մեջ չէր եղել: Բայց ակնհայտ էր, որ իր մանկության տարիներին խաղաղության մի բավականին տևական ընթացք է եղել, քանի որ մտաբերում էր բոլորին ապշահար արած օդային հարձակման դեպքը» (Orwell, 2012: 38): «Պահանջվում էին միայն անթիվ հաղթանակներ սեփական հիշողությանդ նկատմամբ: «Իրականության կառավարում» էին ասում դրան, Նորխոսքում՝ «Երկմիտք» (Orwell, 2012: 40):

Գործադրվելով որոշակի մտաշահարկային կառույցների միջոցով՝ Երկմիտքը գործածվում էր նաև ներկա իրականության ընկալումն աղավաղելու նպատակով: Երկմտքի գործադրման լեզվական կառույցների իր դասակարգմամբ նմանվելով Օրուելին՝ Լուտցն, օրինակ, առանձնացնում է չորս հիմնական լեզվական միջոց՝ մեղմասությունները, ժարգոնային բառապաշարի կիրառությունը, «gobbledygook»-ն ու «bureaucratese»-ը, որոնք նա պարզապես սահմանում է որպես լսարանին բառերի մեծ քանակով ճնշելը, բառերի մեծ կուտակումով բուն միտքը հստակ չհայտնելը, և ուռճացված լեզուն, որը խոսքին ավելացնում է չափազանցված լրջություն և կարևորություն /Lutz, 1997/:

Օվկիանիայի չորս նախարարությունների անվանումները՝ **Ճշմարտության նախարարությունը, Սիրո նախարարությունը, Առատության նախարարությունը և Խաղաղության նախարարությունը**, լեզվի միջոցով իրականության այլափոխված, հեգնական արտապատկերման տիպիկ օրինակներ են: Դրանցից յուրաքանչյուրն իրականում պատասխանատու էր ամբողջովին հակառակ գործառույթների համար: Սիրո նախարարությունն, օրինակ, զվաղվում էր քաղաքական այլախոհների խոշտանգմամբ, Ճշմարտության նախարարությունն ապահովում էր քաղաքական քարոզչությունը, կառավարում էր լրատվությունը, և զբաղվում էր փաստաթղթերի փոփոխմամբ՝ այդ կերպ խմբագրելով պատմությունը, Առատության նախարարությունը զբաղվում էր սովի և աղքատության միջոցով բնակչության կառավարմամբ, իսկ Խաղաղության նախարարությունն, իհարկե, զբաղված էր պատերազմով: Քաղաքական հեգնանքի (political irony) միջոցով իրականությունն աղճատված կերպով ներկայացնող արտահայտություններ են նաև Ճշմարտության նախարարության երեք կարգախոսները՝ «**Պատերազմը խաղաղություն է**», «**Ազատությունը ստրկություն է**», «**Տգիտությունն ուժ է**», ինչպես նաև «**Չիմացությունն ուժ է**», **Երկու գումարած երկու հավասար է հինգ**» քարոզչական արտահայտությունները:

Վեպում երմիտքը լեզվականորեն արտահայտվում է նաև Նորխոսքի որոշ միավորներում: Այդպիսիք են, օրինակ՝ **goodsex, joycamp, ownlife, goodthinkful** բառերը, որոնցում դրական իմաստ արտահայտող բառերի օգնությամբ հեգնականորեն քողարկվում է իրականում խիստ բացասական իրականությունը: **Joycamp** բառը, որը նշանակում է «ուրա-

խության ճամբար», իրականում վայր էր, որտեղ մարդկանց ստիպում էին զբաղվել տանջալից ֆիզիկական աշխատանքով: Նմանապես՝ **goodthinkful** բառը, որը նշանակում է «բարի կամ լավ բաներ մտածող», որպես որակում տրվում էր այն մարդուն, ով մտածում էր Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսությանը համաձայն, այլ ոչ երբեք՝ դրան դեմ:

Ի ամփոփումն, քաղաքական հեգնանքի միջոցով զուգահեռաբար համադրելով հակադիր գաղափարները, իրողություններն ու տեղեկությունները՝ Երկմիտքն իր լեզվական կառույցների միջոցով հնարավորություն էր տալիս շահարկելու մարդու աշխարհընկալումն ու օբյեկտիվ իրականության ըմբռնումը՝ ապահովելով արդյունավետ, սակայն հակադրության մեջ օբյեկտիվ իրականության մասին գոյություն ունեցող պատկերացման պատճառով վտանգված հարաբերական ենթակայությունը: Սակայն երկմտքին փոխարինելու է գալիս «Նորխոսքը», որը, հիմնված լինելով լեզվի՝ մարդու միտքը և մտածողությունը ձևավորելու բացառիկ կարողության վրա, ապահովում է վերջիններիս բացարձակ ու կատարյալ շահարկում՝ դրա միջոցով ապահովելով նաև մարդու կատարյալ և անխախտ ենթակայությունը:

Մտաշահարկման միջոցով հանրության կատարյալ և անխափան հպատակություն ապահովելու նպատակով (որը երկմտքի գործադրման դեպքում կարող էր կասկածի տակ դրվել մարդու գիտակցության մեջ իրականության արդեն իսկ շահարկված ըմբռնման հետ զուգահեռաբար գոյակցող օբյեկտիվ իրականության պատճառով) Օրուելը վեպում մտաշահարկումը խոսույթային մակարդակից տանում է ավելի խորքային, լեզվական մակարդակ՝ ներկայացնելով մտաշահարկումը լեզվի՝ որպես համակարգի միջոցով իրականացվող երևույթ, որը և անվանում է «Newspeak», մեր թարգմանությամբ՝ «**Նորխոսք**»:

Վեպում Նորխոսքը, ինչպես արդեն նշել ենք, ամբողջատիրական կառավարության կողմից ստեղծված և պարտադրված կերպով հանրային գործածության մեջ դրված կող էր, նշանային համակարգ, լեզու, որն ուղղված էր լեզվական մտաշահարկման միջոցով երաշխավորելու հանրության կողմից «Անգլիական սոցիալիզմի» գաղափարախոսության անխափան ընդունումը: Կառավարության տեսլականն էր կիրառությունից դուրս մղել «*հինխոսքը*» (*Oldspeak*), այսինքն՝ *անգլերենը* և մարդկային կյանքի բոլոր ոլորտներում գործածության մեջ մտցնել Նորխոսքը: Այս նախաձեռնության իրականացման հիմնական ներուժը Նորխոսքի կարողությունն է սահմանափակել մարդկային մտածողությունը՝ դարձնելով այն կուսակցության մտաշահարկող գաղափարախոսության գործադրման համար նպաստավոր միջավայր: Հիմնվելով այն գաղափարի վրա, որ լեզուն կարող է կառուցել և ձևավորել մարդկային մտածողությունը, Օրուելը սրանով ուղղակիորեն ի ցույց է դնում լեզվի ներգրավվածությունն իշխանական ուժի չարաշահման և

հանրային մտաշահարկման գործում: Նա կարծում է, որ մտածական և ճանաչողական շրջանակի ընդգրկունությունն ուղիղ համեմատական է լեզվահամակարգի բարդությանը:

Ըստ Չիլթոնի՝ Նորխոսքը «նվազեցված բարդությամբ, քիչ վերացարկուններով ու առանց ինքնահղման (self-reference) լեզու է» /Chilton, 1988: 37/: Այստեղ տեղին է մեջբերել նաև Չիլթոնի կողմից Մ. Էդելմանի՝ «սահմանափակող լեզվի» սահմանման մեկնաբանությունը. «Սահմանափակող հանրային լեզվի հիմնական միտումը խոսույթի շրջանակի նեղացումն է, երբ թույլ է տրվում քննարկել միայն կոնկրետ թեմաներ (հաճախ այդ թեմաներն առասպելական են իրենց բնույթով)՝ իրական գործընթացին, պատճառականությանը և պատասխանատվությանն արվող աղոտ հղումներով, ինչպես նաև չթույլատրելով որևէ քննադատություն: Այս նպատակին կարելի է հասնել լեզվական միջոցներով՝ կոնկրետ բառապաշարի ընտրության կամ ստեղծման, ոչ հստակ քերականական կառույցների ընտրության, ինչպես նաև այլոց հետ հաղորդակցման ընթացքում որոշակի մարտավարության կիրառության միջոցով» /Chilton, 1988: 37; Edelman, 1977/: Լեզվաբանական հարաբերականության հիմունքից բխող այս գաղափարի հիման վրա էլ Օրուելը մարմանավորել է լեզվագործաբանական սկզբունքների այս միահյուսումը մեկ լեզվական մարմնի՝ Նորխոսքի մեջ՝ փորձելով ցույց տալ, թե ինչպես է լեզուն ծառայում որպես գործիք՝ մտաշահարկելու մարդկանց և ուղղորդելու նրանց մտքերն ու գործողությունները նախասահմանված նպատակին:

Իր գործառույթով Նորխոսքը նման է համակարգչային ծրագրավորման լեզվի, որի օգտագործման հիմքում ընկած են հրամանների շղթաները, օր.՝ *«find somewhere options | tr '/' ^n' | sort | uniq -c | sort -k1.1nr | head -10»*: Հետաքրքիր է այն փաստը, որ յուրաքանչյուր հրաման կոչված է կատարելու մեկ հստակ գործողություն և բերելու կոնկրետ արդյունք: Հրամանի կողմից հրահանգված գործողությունից բացի, համակարգիչը այլ գործողություն չի կարող իրականացնել: Եվ ինչպես համակարգիչը չի կարող կատարել հրաման, որն իրեն չի տրվել, Նորխոսքով խոսողներն էլ չեն կարող գործել, մտածել կամ ապրել այն ճանաչողական կաղապարից դուրս, որը հաղորդում է նրանց Կուսակցությունը Նորխոսքի միջոցով: Օժտված պարզեցված քերականությամբ, իմաստներով և արտասանությամբ՝ Նորխոսքը նախագծված է ներկայացնելու որոշակի հրամաններ՝ հօգուտ Կուսակցության մտաշահարկային գաղափարախոսության՝ երաշխավորելով կատարյալ հպատակություն ու հավատարմություն ոչ միայն խոսքով, այլև գործով:

Որպես միտքը սահմանափակող լեզու՝ Նորխոսքը ստեղծվել է անգլերենի ձևաբանական, քերականական, և արտասանական կանոնների զանգվածային վերափոխման միջոցով, և համընդհանուր պարզեցումը կարելի է համարել վերջինիս ստեղծման առանցքային սկզբունքը: Վեպի վերջին՝ «Հավելված» կոչվող գլխում հեղինակը համակարգված

կերպով ներկայացնում է Նորխոսքի լեզվաբանական և մտաշահարկային առանձնահատկությունները:

Նորխոսքի քերականական կառույցվածքն, օրինակ, չափազանց պարզունակ է: Այն ենթադրում է խոսքի մասերի փոխակարգում (conversion) առանց որևէ սահմանափակման, որի համաձայն գոյականն, օրինակ, կարող է գործածվել որպես բայ, ածական, մակբայ և այլն: Բացակայում է բայերի անկանոնությունը. արդյունքում բոլոր բայերի վաղակատար դերբայը (participle II) կազմվում է *-ed* (*goodthinked*) վերջավորությամբ: Նմանապես, բոլոր մակբայները կազմվում են *-wise* (*fullwise, constructionwise, speedwise, goodthinkwise, etc.*), իսկ բոլոր ածականները *-ful* (*goodthinkful, speedful, etc.*) վերջածանցով: Այսպիսով, Նորխոսքում լիովին վերացված է անկանոնության ցանկացած դրսևորում:

Պարզեցման նույն սկզբունքի համաձայն՝ Նորխոսքի բառապաշարը խիստ աղքատիկ է: Այս լեզվում բառերը դասակարգվում են 3 խմբի՝ ա) առօրյա կյանքում կիրառվող բառեր, բ) քաղաքական նպատակների համար ստեղծված բառեր, և գ) գիտական և տեխնիկական եզրույթներ /Orwell, 2012: 344-355/: Բառերը, որոնք արտահայտում էին հակիմաստ, «ընդդիմադիր» իմաստներ, այսինքն՝ իմաստներ, որոնք դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը, անցանկալի էին և դուրս էին հանվում լեզվի բառապաշարից: Մնացած բառերը, ինչպես նաև այն բառերը, որոնք դեռ պետք է ստեղծվեին, բացառապես մենիմաստ էին: Բազմիմաստությունը բացառվում էր՝ լիովին պարզեցնելով լեզվի իմաստային շրջանակը: Յուրաքանչյուր բառ ուներ իր հստակ, ուղիղ իմաստը. «*Դրա բառապաշարն այնպես էր կառուցված, որ Կուսակցության անդամի նկատի ունեցած ցանկացած իմաստի հաղորդներ ճշգրիտ և հաճախ նրբագույն արտահայտում՝ միևնույն ժամանակ բացառելով բոլոր այլ իմաստները, ինչպես նաև դրանց հանգելու անուղղակի մեթոդները: Սա մասամբ արվում էր նոր բառեր ստեղծելու, բայց առավելապես անցանկալի բառերը հեռացնելու միջոցով, ինչպես նաև այն բառերի բացառմամբ, որոնց իմաստները դեմ էին Կուսակցության գաղափարախոսությանը: Եվ առհասարակ, հնարավորինս վերացվում էին բոլոր երկրորդական իմաստները*» (Orwell, 2012: 343-344):

Սակայն իմաստային (semantic) սահմանափակումը, որն արտահայտվում է բացարձակ մենիմաստությամբ, Օրուելի կողմից նախատեսված միակ լեզվաբանական փոփոխությունը չէ: Իմաստային սահմանափակման հիման վրա նա ներկայացնում է նաև Նորխոսքի սահմանափակ գործաբանական առանձնահատկությունները. «*«Ազատ» բառը դեռ պահպանվում էր Նորխոսքում, բայց այն կարող էր կիրառվել միայն այնպիսի դատողություններում, ինչպիսիք են «Այս շունն ազատ է ոջիլներից» կամ «Այս դաշտն ազատ է մոլախտից»:* Այն չէր կարող գործածվել իր հին՝ «քաղաքականապես ազատ» կամ «մտքով ազատ»

իմաստներով, քանի որ քաղաքական և մտավոր ազատությունն այլևս գոյություն չունենին անգամ որպես գաղափարներ, այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար անանուն էին» (Orwell, 2012: 318):

Սա խոսում է այն մասին, որ փաստացիորեն Կուսակցության գաղափարախոսությունից բացի, գոյություն չունեն որևէ այլ համատեքստ, իրադրություն կամ իրականություն, որում բառերը կարող էին այլ բան նշանակել: Ըստ էության, գոյություն ունեն միայն մեկ բառային, քերականական և արտալեզվական համատեքստ, որում Նորխոսքի բառերն արտահայտում էին բացառապես մեկ իմաստ:

Նորխոսքի վերոնշյալ լեզվական (բառակազմական, քերականական, արտասանական) և գործարանական առանձնահատկություններն առանձնակի հետաքրքրություն են հաղորդում վերջինիս քննությանը թարգմանության տեսանկյունից այն պատճառով, որ Նորխոսքի թարգմանությունն, ըստ էության, մի ողջ լեզվահամակարգի թարգմանություն է և ենթադրում է դրա համարժեք վերաստեղծումը թիրախ լեզվի կառույցների և սկզբունքների հիման վրա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Վեպի հայերեն թարգմանվածքում /Orwell, 2012/ Doublethink և Newspeak բառերը համապատասխանաբար թարգմանվել են «Կրկնամիտք» և «Նորալեզու»: «Երկմիտք» և «Նորխոսք» բառերը բնագրային բառերի թարգմանության մեր առաջարկած տարբերակներն են:

2. Վեպից մեջբերված բոլոր պարբերությունների թարգմանությունը մերն է – Գ. Կ.:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berkes J. Language as the “Ultimate Weapon” in Nineteen Eighty-Four. Language in George Orwell’s Nineteen Eighty-Four, 2000 // URL: http://www.berkes.ca/archive/berkes_1984_language.html (Retrieved February 27, 2000; Modified May 9, 2000)
2. Chilton P. Orwellian language and the media. London: Pluto Press, 1988.
3. Edelman M. Political Language: Words that Succeed and Policies that Fail. New York: Academic Press, 1977.
4. Lutz W. The New Doublespeak. Why No One Knows What Anyone’s Saying Anymore. USA: HarperPerennial, 1997.
5. Orwell G. Politics and the English Language. London: Horizon, 1946.
6. Rogers E., Steinfatt T. Intercultural Communication. USA: Waveland Press Inc., 1999.

7. Whorf B. L. The Relation of Habitual Thought and Behavior to Language // *Language, Thought, and Reality: Selected Writings of Benjamin Lee Whorf*. Cambridge, Massachusetts: MIT Press, 1956.
8. Orwell G. *Nineteen Eighty-Four*. London: Penguin Books, 2012.

Г. КАРАПЕТЯН, К. СОГИКЯН – «Двоемыслие» и «Новояз» Дж. Оруэлла как инструменты политической манипуляции. – В статье представлены результаты анализа методов лингвистической манипуляции *Двоемыслие* и *Новояз* Дж. Оруэлла как двух дискурсивных инструментов политической манипуляции, отраженных в романе “1984”. Язык представлен в статье как наиболее эффективное средство, применяемое в политической манипуляции. Двоемыслие как метод лингвистической манипуляции рассматривается в противопоставлении с когнитивным диссонансом, служащим основанием для последующих более детальных психологических, умственных и социальных характеристик. В статье представляются также лингвистические особенности Новояза как наиболее эффективного когнитивного средства политической манипуляции.

Ключевые слова: Оруэлл, 1984, Двоемыслие, Новояз, политическая манипуляция, лингвистическая манипуляция, политический дискурс, политическая ирония

G. KARAPETYAN, K. SOGHIKYAN – *The Orwellian “Doublethink” and “Newspeak” as Tools of Political Manipulation.* – The purpose of this paper is the linguistic study of Orwellian Doublethink and Newspeak as powerful discursive and linguistic tools of political manipulation presented in the novel “Nineteen Eighty-Four”. The paper first presents language as the most powerful and effective tool used in political manipulation, elucidates Doublethink as a means of linguistic manipulation viewed in contrast with cognitive dissonance, which then serves as a firm foundation for expounding its more detailed psychological, mental, and social characteristics, and proceeds to the description Newspeak as a cognitively more effective linguistic tool for political manipulation.

Key words: Orwell, 1984, Doublethink, Newspeak, political manipulation, linguistic manipulation, political discourse, political irony